

կերտներին աւարտման վկալական՝ առանց հարցաքննութեան և մեան ևս:

Մեր վերոիշեալ բացատրութեան հիման վերաբ՝ ալս երկու կտու կէտերն ևս տեսչի իրաւասութեան սահմանից դուրս են և մանկավարժական ժողովի զբաղմանց շրջանն են մտնում:

Բաւականանում ենք ալս չափով և գովում պ. Շահ-Նազարեանցի եռանդը, որ այսպիսի մի մանրակրկիտ աշխատութեամբ առիթ է տալիս հոգեոր բարձր իշխանութեան և հասարակութեան ուշադրութիւնը հրաւիրել դպրոցական կանոնադրութեան պէս մի լուրջ և անհրաժեշտ խնդրի վրա:

ԲԲԲԶ

---

Հառապտման. կազմեց Ե. Թ. հրատ. Ցովհաննէս Արամեանցի. Ս.-Պետերբուրգ 1902

Հատ սիրուն ձեռնարկութիւն է սկսել Ե. Թոփչյեանը. նա կազմում է «բաւանի մարդկանց կենացքութիւնները» և ինչպէս երեսում է գրքուկիս վերնազրի ճակատից, ալս արդէն հինգերորդ կենացքութիւնն է. Տաղանդաւոր մարդկանց կեանքն ուսանելի կողմեր շատ ունի, ալդ պատճառով և մեր ժողովրդի և նա մանաւանդ պատանեկութեան համար օգտու կար ընթերցանութեան նիւթ կարող է լինել թէ ժամանակակից գործող և թէ պատմական նշանաւոր մարդկանց կեանքն ու գործունէութիւնը՝ միաւն թէ ընտրութիւնը լինի խիստ և կենացքութիւնը հմտութեամբ ու ճաշակով կս զմուած:

Մեր ձեռքքը չեն անցել Ե. Թ.-ի կազմած նախորդ չորս կենացքութիւնները, ալդ պատճառով և մեր խօսքը կվերաբերի միմիալն «Հառապտման ին»:

Հառապտմանն ալժմնան զերմանացի դրողների մէջ նշանաւոր դիրք ունի բռնած և իւր տաղանդաւոր երկերով արժանացել է ոչ միայն զերմանացիների, ալլ և ամբողջ Եւրոպ պալի ուշադրութեանը: Նրա քանքարաւոր բեմական զրուածները հետզետէ թարգմանում են օտար լեզուներով և ներկալացւում Եւրոպական լալտնի թատրոններում: Նա դեռ քառասուն տարին չէ բոլորել, ուստի և կարող է աւելի կատարելագործուած աշխատաւոթիւններով հանգէս գալ ասպագալում և աւելի հոչակուել:

Պ. Ե. Թ.-ի կազմած համառօտ կենսագրականը շատ առջօտ պատկեր է տալիս Հառապամանի մանկական հասակի զարգացման և շրջադատող հանգամանքների ազդեցութեան նկատմ, մբ. իսկ նրա ուսանողութեան տարիների մասին ոչինչ չէ ասում, այն ինչ լատանի իրողութիւն է, որ հենց արդ ժամանակաշրջանում լատանապէս երկում է ապագայ տաղանդը և արդ շրջանի ազդեցութիւնը շատ մեծ նշանակութիւն է ու նենում նրա մտքերի ուղղութեան և կազմակերպութեան վրայ:

Համառօտ կենսագրական ակնարիխց լետոլ պ. Ե. Թ. լիշում է Հառապամանի երկերը, պատմում է նրանց կարճառում բովանդակութիւնը և մի երկու խօսքով առաջ բերում գլխաւոր հերոսների բնորոշ լատկութիւնները. Ընթերցողն ամփոփ զաղափար է ստանում արդ գրուած քնների մասին: Աննշան տեղ է բռնում քանքարաւոր բանաստեղծի ընդհանուր աշխարհականեցքի բացատրութիւնը, այն ինչ արդ աւելի էական նշանակութիւն ունի հեղինակի հոգին ըմբռնելու և գրուած քը գնահատելու համար:

Պ. Ե. Թ.-ի հակերէնը պարզ ու հասկանալի է, միայն օտար բառեր շատ է գործածում—կատեգորիա, նօվելլա, մատերիալիզմ, թէօրիա, լիրիքական, միտիկական, իդէա, նատուրալիստ, կարիէրա, ալկօնօլիկ, ցինիկ, էնտուզիաստ, կապիտալիստ, մօնօքրաֆիա; կօնֆիլիկա, իդէալիստ, աեխնիկա, կատաստրօֆ, պեսիմիստ, կօմեդիա, դրամա, հօմմանիստ, սիմվոլական և ալլն.—կանոնողապէս սխալ դարձուած քններ, օրինակ, «հոգատարութեան տակ» (Էջ 4) պկտրում նրա հանգիստը (Էջ 7) «քէլիստապաղի կանգիտատ» (Էջ 23) «ամուսնանալ նրա վրա», (Էջ 25) «մեծ դեր է կատարել Հառապամանի տպաւորութիւնները» (Էջ 38): մոռացել է ընտանիքին (Էջ 59), ունեցաւածք, ընկուածք և ալլն. «Պատկերանում է... սենեակները» (Էջ 31).

Տպագրական սխալների թիւը խիստ շատ է—մինչև 42 թիւը հասանք և լոգնեցինք նշանակելուց: